

13. Օխեշ

Կէղնի, չէղնի իրիկըմ ու կնիկըմ։ Ուրանց լե տղե մը, էդոնք շատ ֆուխարա կէղնին, ավուր հացի կարոտ։

Ավուրըմ մեկ կնիկ իրկան կասե.— Մարդ, ելի առ զէդա տղեն, տար քաղաք, տուր տեխըմ, թող էրթա մշկուքեն էնե, առնիք զհախ, բերինք ատինք։

Իրիկ կէլնի կառնե զտղեն օր էրթա քաղաք, կիգա քաղքեն կմոտենա, էդ տեխ լե գեղըմ կէղնի, գեղի կուշտ լե՝ հ՝ախբուրըմ։

Կիգան կնստին վըր էդ հ՝ախբրին, կկեռի հ՝ախբրի վրեն, ջուր օր կխմե, օխեշ կէնե։

Օխեշ օր կէնե, դարվեշըմ թիկ կկանի հ՝առեշ։

Կասե.— Մարդ, դու հ՝որի՞ օխեշ էրիր։

Մարդն կասե.— Ջուր խմի, էրի օխեշ։

Դարվեշ կասե.— Օխեշ իմ անուն է։

Ու կդառնա կհարցու.—էգ տղեն հ՝ու՞ր կտանիս։

Կասե։— Կտանիմ քաղաք, վարձել իտամ, իմ տղեն է։

Դարվեշ կասե.— Տուր իմ մոտ, ես կվարձիմ, ամսական լե օսկի մը հախ կիտամ ուրեն։ Կիշքեմ օր քու տղեն պոբոր էղավ, ղաթի զուր հախ կիվելցում, օր աչք չէղավ՝ կիտամ զքու տղեն, առ ու գնա։

Մարդն ըռազի կէղնի։ Ջտղեն կիտա դարվեշի մոտ, կառնե զուր օսկին, կթորկե կիգա ուր տուն։

Կնիկն կասե.— Մարդ, ի՞մալ էրիր զիմ տղեն։

Մարդն կասե.— Գացի, քաղքի մոտ գեղըմ կեր, գեղի մոտ լե հ՝ախբուրըմ, խմեցի շուր, էրի օխեշ, դարվեշըմ ելավ, ասեց՝ «Մարդ,

զէդ տղեն հ՝ու՞ր կտանիս, ասի՝ քաղաք կտանիմ, իտամ մշակ. ասեց՝ տուր ընծիկ, ես կվարձիմ, հախ լե ամսական մեկ օսկի։ Տվի զտղեն դարվեշին, առա զիմ օսկին, թորկի էկա։

Մարդն է, զօրեր կհամբրեր կասեր՝ ամիս եբ կթմի, օր էրթամ զիմ օսկին, առնիմ ու հ՝իգամ։

Տղեն է, օր կէրթա դարվեշի տուն կմտնի, ախչիկըմ կէղնի էդ տեխ։

Դարվեշն է, ցերեկներ կելներ կէրթեր օլբրտեր, հ՝իրկուն կդառներ, կիգեր ուր տուն, տղեն ու ախչիկ մինակ կմնեն տուն։

Ախչիկն ասեց.— Տղա, զէդա հ՝օգեն կտեսնա՞ս,— տարավ հ՝օդե մը ցուցուց,— էդ հ՝ըմեն իսնի օսկոր է, զըմեն դարվեշ կերեր է ու զոսկըրներ լցեր է հ՝ոդի։ Դարվեշի խոսքին շատ անկաճ չէնիս, ինչ օր կասե, դու ասե՝ հա, բըլե քու սրտի միշու գաղտնիկն ուրեն չասիս, բալքիմ սըրեն բերինք, առնեք զիրար ու փախնեք, ուխտ էղնի հ՝առշև աստծուն՝ ես քզի, դու ընծի։

Ամիսն օր կթմի, տղի պապ կելնի, կիգա վըր հ՝ախբրին, օխեշ կէնե. դարվեշ կելնի դուրս։

Կասե.— Էկա՞ր։

Մարդն կասե.— Հա։

— Քու տղեն,— կասե դարվեշ,— վալայի, էն խրտար աչքբաց չէ, տեսնամ էդա ամիս լե կպահիմ, օր աղեկ չէղավ՝ կիտամ, առ ու գնա։

Կհանե օսկի մը կիտա մարդուն, կասե.— Էդա քու տղի հախն է։

Մարդ կառնե զուր օսկին, կթորկե օր հ՝իգա ուր տուն։

Կելնի դուրս, էնտեխ խանտակըմ կէղնի, կնստի, օր քիչըմ հովի։

Դարվեշ կիտա տղի հախն ու կթորկե, կէրթա քաղաք։

Քաղաք կհասնի, չհասնի, մարդն կիշքե օր տղեն հ՝ախբրից ելավ դուրս։

Կհասնի փաթվի տղի վիգ, կասե.—Լաո, էդ ի՞նչ կրակ էր, բերի իմ ձեռքով թալեցի զքզի մեջ, իմա՞լ իս, իմա՞լ չիս։

Տղեն կասե.— Իսկի մը հարցուցի։

Սուֆրե մը կէղնի ձեռք, կիտա պապուն։

Կասե.— Աբո, կտանիս զէդա, կկախիս պատեն, ձեռք չիտաս հ՝ինք, չէղնի բանաս, հար ես հ՝իգամ։

Մարդն կառնե սուֆրեն, կիգա։ Կիգա էրկու գեղ կընցնի, գեղըմ կմնա օր հասնի ուրանց գեղ, կնստի քիչըմ, օր հանգ առնե, միտք կընկնի տղի ասած խոսք, կասե. «Հալբա՞թ էդոր մեջ բանըմ կեր, օր իմ տղեն ասեց՝ աբո, զէդա սուֆրեն չբանաս հար ես հ՝իգամ»։

Կբանա, կտեսնա, ինչ տեսնա աղեկ է. կտեսնա օր թագավորի սեղան լե հրմալ չէ, ինչ թյուրլու եմակ ասիս մեջ կա, վրեն կիշե, կկշտանա։ Կվերցու կծալե ու կդարկե հանթե տակն ու կիգա։

Կիգա տուն, կնիկ կվազե հ'առեջ, կասե.—Մարդ, մըր տղեն իմա՞լ է։

Մարդն կասե.— Կնիկ, վալայի, տղեն աղեկ է, բըլե մըզիկ հըմալ բանըմ է փեշքեշ էրի օր թագավորի խազինի մեշ լե հըմալ բան չկա։

Կնիկն կասե.— Մարդ, տեսա՞ր օր ես քու վրեն խելոք ենք, օր հ'առջին հեղ տաներ, հմկա թամ հալիմ տեր ենք էղի։

Բերեց կնկա հ'առեջ բացեց զէդ սուֆրեն։ Կնիկ օր տեսավ, պաղբերնավ մնաց, քանի մը լողմա վերցուց միշեն, ասեց.— Դը ծալե, վերու հըմկա։

Օր ծալեց վերցուց, իրիկն ասեց.—Կնիկ, դինա՞ս, տղեն էն գահ օր տվեց զէդ սուֆրեն հ'իս, ասեց՝ չէղնի ձեռք իտաք հ'ինք, կտանիս իմ մամուն թանբիհ կէնիս, պատեն կախե, հար ես հ'իգամ։ Օր էկավ, չէղնի ասիս՝ բացեր ինք։

Մարդու ուշք ու միտք վիսա վըր ամսըներուն էր, ամիս ե՞ր կթըմի, ուր մտքով կասեր, օր էրթամ զօսկին առնիմ, հ'իգամ։

Ամիս թմավ, մեկ լե ելավ, գնաց վըր հ'ախբըրին, օխեշ էրեց, դարվեշ ելավ դուրս։

Ասեց.— Դարվեշ բաբա, տղեն իմա՞լ է։

Դարվեշն ասեց.— Վալայի, տղեն աղեկ չէ, գործի չիշքե, էդա ամսական լե կիտամ, գալ ամսուն չէղավ, կիտամ զքու տղեն, առ ու գնա։

Մարդն առավ զօսկին, դարվեշ թորկեց, գնաց քաղաք, ինք լե մտավ խանդրկի մեշ, ասեց՝ քիչըմ հովիմ, սորա ելնիմ թորկիմ, էրթամ։ Բըլե սուտ կասեր, բերան տամ էր առի, կասեր՝ տեսնամ իմ տղեն ըստ հաղ ի՞նչ կբերե իտա հ'իս, առնիմ էրթամ։

Դարվեշ հասավ քաղաք, չհասավ, մարդն տեսավ, օր տղեն հ'ախբրի միշեն էշըմ քաշեց ու ելավ դուրս։

Հ'ելավ դուրս, ասեց.—Աբո, կտանիս զէդա էշ, աղեկ տեղըմ կկապիս, օրական էրկու հեղ ուրեն հ'երդ ու գարի կիտաս ուտե, աղեկըմ թիմար կէնիս, հար ես հ'իգամ։ Բըլե ուրեն ձեռքով չզարկիս, ասիս՝ թայս։

Մարդն առավ զէշն ու էկան։ Ճամբու հետ ասեց. «Ջանըմ, իմ տղեն ասեց՝ չէղնի ձեռքով զարկես էդա իշու սաղրուն, ասես՝ թայս, հալբաթ էդոր մեշ բանըմ կա, կանի տեսնամ ի՞նչ է»։

Ձեռքով զարկեց իշու սաղրուն, օր էրեց թայս, տեսավ օր էտկեն փշքըլի տեխ օսկի է, կթափի։

Քշեց, առավ էկավ ուր տուն։

Կնիկ ելավ հ'առեջ, ասեց.— Տնավեր, գացիր-էկար, է՞շ առար, էկար. կբերեր, աղեկ բանըմ թըղ բերեր։

Մարդն ասեց.— Կնիկ, էդ վըր սուֆրին էլ աղեկ է։ Հեղըմ իշքե, տես։

Ասեց ու ձեռքով զարկեց իշու սաղրուն, տեսան օր փշբլի տեխ օսկի կթրկե։

Ասեց.— Մարդ, օղորդ օր էդի վրր սուֆրեն աղեկ է։

Տարավ կապեց, կնկան ասեց.— Կնիկ, դինաս տղեն էն գահ օր թասլիմ էրեց զէդ էշ ընծիկ, ասեց՝ կտանես կապիս, օրական էրկու հեղ ուրեն գարի կիտաս, թիմար կէնիս, բրլե թայս չէնիս ուրեն. հար ես հ'իգամ։ Վազ օր կիգա, կհարցու թե՝ թայս էրեր իք, չասիս թե էրեր ինք, կհերսոտի։

Մարդն է, քանի կէրթեր կզանկրներ։ Կէրթա աղեկրմ զուր տուն ու տեխ տուշմիշ կէնե, կնիկ լե զուր վրա-գլուխ կկոկե։

Էլ էդ մարդու անուն կելնի։ Կլսե փաշեն, կբարեկամանա հետ։ Օր կբարեկամանա փաշի հետ ու փաշի մարդոց, կելնի տավաթ կէնե ուր տուն։

Կբերե բաղչեն կփռե, կճամբե, զէդոնք առնե, կիգա։

Փաշեն ու ուր մարդիկ շաշ կմնան։ Կասին. «Ջանըմ, էդա մարթ տավաթ էրեր է, զմզիկ բերեր է հ'ոդա, էդոր աշճին հ'ու՞ր է»։

Մեկ լե կիշքե օր էդ մարթ ուր կշտեն սուֆրե մը հանեց, բացեց, ինչ օր աստված ստեղծեր է, էդ սուֆրի մեջ կա։

Փաշի կնիկ լե կէղնի փաշի հետ։ Կասե ուր բեսլամին.— Գնա՛ մըր տուն, ֆլան տեխ էդա ըռանդ սուֆրե մը կա, առ ու էկո։

Բեսլամեն կթռնի, կառնե կիգա։ Կբերե դնե փաշի կնկա կուշտ, մարդ ու մադաթ չտեսնա։

Նշնելու վախտ զուր սուֆրեն կդնե էդ մարդու սուֆրի տեխ, կվերցու զմարգու սուֆրեն, կզարկե բեսլամի հ'անթե տակ ու կառնե կէրթա։

Հ'իրկուն օր կէղնի, էդ ռնճբրի կնիկ կէլնի կբերե սուֆրեն օր հաց ուտեն, սուֆրեն կբանա, կտեսնա օր բան չկա մեջ, չոր ու ցամաք։

Կասե.— Մ'արդ, էդ իմա՞լ էղավ։

Մարդն կասե.— Խոմ լդի ի՞նչ էղավ, խամարա էղներ, խրլրսեր էր։ Էդա խրդար մարդ կերան, հաց-բան կմնա՞ հ'ինք։

Կնիկ ավտրցավ, էլ ետեեն չհրնկավ։

Օլոր օր էդ մարդու կնիկն է, ելավ բաղնեկ կէրթեր։ Հեծավ զէշ, գնաց։

Գնաց, օր հասավ բաղնեց դուռ, բաղնեցպրնին կանչեց, հինգ խրոռշ փարա տվեց ձեռկ, ասեց.— Խուրձրմ առվուտ կէրթաս կառնիս. բերիս, դնիս իմ իշու հ'առեջ, բայց իմ իշուն չէղնի թայս էնիս։

Կնիկ տվեց զփարեն ու թորկեց, էկավ մտավ բաղնեկ, կլողկրներ։ Բաղնեպան կանչեց զուր տղեն, ասեց.— Գնա ճյուզրմ առվուտ գնե, բի թալ էդա իշուն. թրդ ուտե։

Տղեն գնաց խուրձըմ առվուտ բերեց, դրեց էդ իշուն, թավակալի ձեռքով տիկեց իշու սաղրուն, օր էրթեր էնդին օր թայս էրեց։

Էշ սազեց օսկի փշքըլել։

Բաղնեպան տեսավ, ասեց տղին.

— Տղա, տղա, վազե գնա, մըր թավլեն էդա ըռանկ էշըմ կա, բի, հ՝իչու զէդոր փալան, զարկ վըր էնդոր, առ զէդա էշ, տար կապե մըր թավլեն հար ես հ՝իգամ։

Կնիկն է, զուր գլուխ լվաց, ելավ տեսավ օր ուր էշ կապուկ է դուռ, հագավ զուր հալվրներ, հեծավ զուր էշ ու դառցավ էկավ տուն։

Հ՝իրկուն օր տանի վախտ էղավ, մարդ տարավ գարի կիտեր, չէ՞ հ՝ըմեն վախտ օր տանու ատեն կիգեր, մարդ կիգեր զիշու պոչ կվերցրներ, օսկի կփըշքլեր, վերցուց զպոչ վի, տեսավ օր խուշքի փըշքլեց, շիվարավ մնաց։

Էկավ կնկան ասեց.— Կնիկ, աստված զքու պապու տուն շինե, էդա ի՞նչ էր էղավ։

Կնիկն ասեց.— Ըպա իմա՞լ կասիս հար ադամին, խոմ քզի օսկի շպիտի փշքըլե, էդ խըդար կեր ուր ներս, փշքըլեց խըլըսավ։

Մարդ ձեն չհանեց, խփուց զուր բերան, գնաց նստավ։

Մեկ լե ուր ուշք ու միտկ թալեց վըր տղի ամսականին։ Ամիսն օր թմավ, ելավ էկավ վըր հ՝ախբրրին, օխեշ էրեց, դարվեշ ելավ դուրս։

Ասեց.— Իմ տղեն իմա՞լ է։

Դարվեշն ասեց.— Աղեկ է, բըլե բանի անկաճ չէնե, ձեռքեն բան չիգա, դրռալ է։ Էդա օսկին լե առ, գնա. էդա ամիս թըղ ելնի, գալ ամսուն էկո, զքու տղեն առ ու գնա։

Դարվեշ տվեց զօսկին ու թորկեց, գնաց քաղաք։ Մարդ լե նստուկ էր խանդրկի մեջ, կհովեր։

Մեկ լե տեսավ, դարվեշ հասավ քաղաք չհասավ, տղեն հ՝ախբուր բացեց, ելավ դուրս, ձեռկ դրդումըմ կեր։

Ասեց.— Աբո, առ զէդա դդում, էրթանք մըր տուն։

Պապն առավ զդդում, տղեն լե հ՝ընկավ ետևեն, էկավ տուն։ Օր էկան տուն, տղենն ասեց.— Աբո, զէդա դդում գետին չդնիս, դիր թայշըրիկ։

Մարդն տարավ զդդում, դրեց թայշըրիկ։

Մանցին հ՝իրկուն օր հաց ուտելու վախտ էղավ։

Տղենն ասեց.— Աբո, սուֆրեն հու՞ր է, բի տեսնաք։

Պապն ասեց.— Լաո, հանդե կախուկ էնա տեխ։ Իմալ օր բերեր իմ, հ՝ըմալ կախեր իմ ու թողի կախուկ։

Ելավ գնաց, առավ էկավ։ Բացին տեսան օր բան չկա, ավել ու ցախավել։

Տղենն ասեց.— Իմ էշ հ՝ու՞ր է։

Մարդն ասեց.— Հանդե կապուկ հ՝ախոռ։

Ելավ էկավ իշու խեչ, զարկեց ձեռքով վրը սաղրուն թայս էրեց, տեսավ օր խուշքի կփշքըլե, շիվարավ մնաց։

Դառցավ էկավ նստավ, հար հ՝իրկուն էղավ։

Հ՝իրկուն օր էղավ, պապուն ասեց.— Ելի, զէն դդում առ ու էկո։

Մարդն ելավ, զդդում առավ, էկավ տվեց, տղեն դրեց հ՝առեջ՝ տախտի վրեն։

Օր դրեց վրը տախտին, էրկու արար էլան մեջեն։

Տղենն ասեց.— Արրըներ, զձրղիկ տեսնամ, զիմ պապ ու մամ հրմալ կէնեք հիրիսի օսկոր, հար զօղորդ ասին, տեսնաք իմա՞լ ին էրի զիմ սուֆրեն ու զէշ։

Արրըներ վերցին զէրիկն ու զկնիկ դրին գետին, զարկ, հա զարկ, հալ չթողին վրը ուրանց։

Պապն ասեց.— Լաո, զիս հ՝որի՞ կզարկիս, ես բանե խաբար չունիմ, քու մամուց հարցու։

Արրըներ թորկին զէրիկն, զառցան վրը կնկան, օր քանի մը խամչի քաշին. ասեց.— Յաման, ձրը բաղդն ու ձրը աստծուն իմ հ՝ընկի, թորկեք զօղորդն ասիմ։

Թորկին։

Ասեց.— Օրըմ զփաշեն, զփաշի մարդիկն ու զուրանց կնկտիկ տավաթ էրեր ենք, բերի մըր բաղչեն։ Տարա սուֆրեն, էնտեխ բացի, իքրամ էրի ուրանց, կերան հաց, հ՝ելան գացին։ Ես լե վերցի սուֆրեն, դառցա էկա տուն։ Հ՝իրկուն բերի բացի, տեսա օր բան չկեր մեջ, ավել ու ցախավել, ասի՝ զայիր խըլըսավ։ Էլ փոխեցի՞ն, տարան ուրանց հետ, իմա՞լ էղավ, չըմ գինա։

— Շատ աղեկ, էդ սուֆրեն. էշն իմա՞լ էղավ։

Ասեց.— Էշ լե օրըմ հեծա, գացի բաղնեկ. հանի հինգ խրոոշ, տվի բաղնեպընին։ Ասի՝ խուրձըմ առվուտ բի, թալե իմ իշու հ՝առեջ, բըլե թայս չէնիս, հար լողկընամ, ելնիմ հեծնեմ էրթամ։ Մտա լողկրցա, հ՝ելա տեսա, օր դուռ կանուկ էր։ Հեծա, էկա։ Հ՝իրիկվան դարմնի վախտ օր էղավ, տարավ քու պապ հ՝երդ ու գարի կիտեր, զպոչ վերցուց վի, էշ սաղեց խուշքի փշքըլել, էլ չըմ գինա զէշ լե բաղնեկն ին փոխեր, թը՝ չէ։

Տղենն ասեց.— Դու գինա՞ս որ մեկ բաղնեկն է։

Կնիկն ասեց.— Հա, հ՝որի՞ չըմ գինա։

Տղենն ասեց.— Մադամ օր հրմալ է, իմալ օր հ՝առչին հեղ զփաշեն, զփաշի մարդիկ ու զուրանց կնկտիք տավաթ էրեր իս, կէլնիս կէրթաս հեղըմ լե ուրանց թախըմով տավաթ կէնիս, կառնիս կիգաս ֆլան տեխ։

Տեխ ցուցուց, քախքեն դուրս։

Մամու ճար կտրավ, հ՝ելավ գնաց, տավաթ էրեց զէդ մարդիկ ու առավ էկան տղի ցուցուցած տեխ։

Օր կնիկ առավ զէդ մարդիկ ու զուրանց կնկտիք, էկավ, տղեն գողտուտիկըմ առավ զուր դդում ու գնաց մտավ էդոնց մեշտեխ։ Հանեց զդդում, գրեց գետին, էրկու արաբ կանան հ՝առեջ։

Տղեն ասեց.— Ձենե կուզիմ հըմալ էնիք զէդա կնկտիք ու մարդիկ, օր հալ չմնա ուրենց վրեն, հար հանին զիմ սուֆրեն իտան։

Արբըներ զէդոնք թալին գետին ու զարկին։ Հազար տարի թըղ բոռան, թե մենք խաբար չունեք, ո՞ր անկաճ կէնե։ Ճար ուրանց կտրավ, տեսան օր յախա չկըռնան ազատին։ Փաշի կնիկ ասեց.

— Յաման, ձըր ք.. ուտեմ, մը զարկեք, էրթամ բերեմ զձըր սուֆրեն, իտամ ձի, իմ մոտն է։

Ասին.— Դու էդա տեխեն պիտի չէրթաս, մարդըմ ճամբե, թըղ առնը, հ՝իգա։

Ճամբեց զբեսլամեն, առավ զսուֆրեն, էկավ։ Բերեց թասլիմ էրեց արբընեռուն։ Արբըներ նոր վազ էկան, հ՝ելան թորկին գացին։

Օր զսուֆրեն բերին տվին, տղենն ըստ հաղ մամու վրեն դրեց, օր ճամբե զբաղնեպանն առնե, հ՝իգա։

Մամն ճամբեց, զբաղնեպանն առան էկան։

Էկավ, բարև տվեց, նստավ։

Տղենն հանեց զդդում, դրեց օրթեն։ Ջուխտակ արաբ թիկ հ՝ելան կանան տղի հ՝առեջ։

Տղենն ասեց.— Ձենե կուզեմ օր զէդա բաղնեպան թալեք գետին, զարկեք, քանի նաֆաս կէլնի կզարկեք, հար բերե զիմ էշ իտա։

Արբըներ զբաղնեպան շրջեցին գետին ու առան զխամչին, հ՝ընկան վրեն՝ զարկ, հա՛ զարկ։

Բաղնեպան բան ու գործ չունի, հազար տարի թըղ բոռա. ես բանե խաբար չունիմ, ո՞ր անկաճ կէնե։

Բաղնեպան տեսավ օր յախա չկառնա ազատե, ասեց.— Յամա՞ն, ձըր բաղդն իմ հ՝ընկի, թորկեք ելնեմ, բերեմ իտամ։

Ասին.— Դու պետք չէ էրթաս, մեկըմ ճամբե, թըղ առնե, հ՝իգա։

Ճամբեց զտղեն, առավ զէշ, էկավ։

Տղենն ասեց.— Ինչ խըդար օսկի լե թըրքեր է, զէն լե կբերես, կիտաս։

Բաղնեպան զէն լե բերեց տվեց, նոր զուր յախեն ազատեց։

Տղենն ասեց.— Դը հ՝ելի, գնա քու տուն, հեղըմ լե, հեղըմ լե, էդա քզի խրատ էղնի, օր հըմալ խալթ չէնիս։

Տղենն օր զուր սուֆրեն, զէշ առավ փրթավ ազատավ, հիրկուն պառկելու վախտ էղավ, պապուն ասեց.— Աբո, ես կպառկիմ քնիմ,

լուսուն հ՝անգան կէլնիմ քնուց, մըր էնա հ՝օգեն շաքմաքճե մը կա, կէլնիս կշալկիս, էրթաս շուկեն, կծախիս։ Կասիս՝ իմ շաքմաքճի գին հ՝իսուն օսկի է, բըլե բալնիկ չիտաս հետ տանեն, բալնիկ կգառցուս, կառնիս կիգաս քու հետ, առանց բալնքի կիտաս հ՝իսուն օսկու։

Դարվեշ գեժտան-գեժ կախըլի օր տղեն ղուր հունըրներ սովրավ, առավ ղուր կնիկն ու փախավ։

Ավուրըմ մեկ ասեց. «Կանի հ՝ելնեմ էրթամ շուկեն, հալբաթ էգ տղեն հըմկա հունարըմ կէնե, ճամբե հ՝իգա շուկեն, ծախե, առնեմ բերեմ, տղեն լե հետ դառնա հ՝իգա»։

Դարվեշ հ՝ելավ, էկավ շուկեն։ Տեսավ օր մարդու մը մեկ շալկեր է շաքմաքճե մը, կօլըրտու։

Ասեց.— Էդ ի՞նչ շաքմաճա է, կծախի՞ս։

Մարդն ասեց.— Հա, կծախեմ։

— Գինն քանի՞ խրոոշ է։

Մարգն ասեց.—Հ՝իսուն օսկի է, բըլե առանց բալնըկի կիտամ։

Դարվեշն ասեց.— Օր առանց բալնըկի կծախիս, անփարա լե իտաս, ընծի պետք չէ։

Դարվեշ թորկեց, գնաց ուր տուն։

Թուճարըմ հ՝ռաստ էկավ, ասեց.— Վալայի, պիտի առնեմ զէդա շաքմաճեն, տանեմ իմ կնկան, բալքիմ զիս առնե ներս։

Էդ թուճրի կնիկ հերսոտեր էր, զինկ էրեր էր տնեն դուրս։

Առավ։ Առավ էկավ։ Տեսավ օր կնիկ փանշարեն նստուկ է, բըլե մարդ ղբալնիկ չտվեց, առանց բալնըկի առեր էր։

Ասեց.— Խանում աֆանդի, տես իմա՞լ շաքմաճե մը բերեր իմ քզիկ։

Կնիկն ասեց.— Առ ու էկո վի։

Առավ գնաց վի, տվեց զհ՝իսուն օսկին, մարդ թորկեց էկավ։

Բերեց զփարեն, տվեց տղին։

Տղեն ասեց.— Բալնիկն հ՝ու՞ր է։

Ասեց.— Էդա լե քու բալնիկ։

Հանեց տվեց տղին։

Հ՝իրկուն օր ելավ, պիտի պառկեն, տղեն մեկ լե կանչեց զպապ, ասեց.

— Լուսուն կելնիս մըր հ՝ախոռ, բոզ ձի՝ մը կա կապուկ, կտանիս շուկեն, կծախիս, գին էրկու հարիր օսկի է, բըլե զկյամ չիտաս հետ, կդառցուս կառնիս կիգաս հետ։

Լուսմութ օր էղավ, տղի պապն է հ՝ելավ, զկյամ զարկեց ձիու բերան, հեծավ ու դեմ՝ քշեց գնաց քաղաք՝ օր ծախեր։

Գնաց, դարվեշ էկավ հ՝ռաստ։

Ասեց.— Զէդ ձին կծախի՞ս։

Մարդն ասեց.— Հա։

— Քանի՞ օսկի կիտաս։

Մարդն ասեց.— Երկու հարիր օսկի։

Օր ասեց երկու հարիր օսկի, ասեց.— Դը նստի։

Նստցուց, զերկու հարիր օսկին համբրեց, զձիու կյամ թրոցուց մարդու ձեռքի մեջեն, մարդ լե մոռցավ. հեծավ ու դրմ՝ քշեց հ՝ախբուր, ծակ բացվավ, մտավ ներս։

Օր մտավ ներս, քըրրեն հ՝իրարուց կպատռեր։

Ասեց.— Ախչի, զիմ խամեն բի։

Ախչիկն գնաց, օլբրտավ, դառցավ էկավ, ասեց.— Ջգտա։

Դարվեշ զօտներ կտրփեր գետին, փրփուր թիզըմ տվեր էր վըր բերնին, աչքերը արընխբոնի։

Ասեց.— Ախչի, արի դու բռնե, ես էրթամ առնիմ, հ՝իգամ։

Դու մ՝ ասի էդ ձին տղեն կէղնի, չէ՞ ախչիկ ու տղեն զիրար հ՝առշին հեղ սովրրցուցած են։ Ախչիկ օր կիգա զձիու կյամ կբռնե, հ՝ուշիկըմ, շուտըմ կթալե զձեռք, զկյամ ձիու գլխեն կշոպկե հանե։

Օր կհանե, ձին կթռնե հ՝ախբրից դուրս։

Դարվեշ դառցավ էկավ, տեսավ օր ախչիկ զձին թորկեր է։

Ասեց.— Հ՝որի՞ թորկեցիր։

Ախչիկն ասեց.— Վալայի, չկառցա զավթենք, ցոնցեց զգլուխ, զկյամ շոպկեց, հանեց գլխեն, փախավ գնաց։

Դարվեշն ասեց.— Յավաշ, ես զձին բերեմ, սորա քու հետ կխոսամ։

Հ՝ընկավ ձիու հ՝ետևեն։

Օր հ՝ընկավ ձիու հ՝ետևեն, ձին էղավ աղվես։ Ձին օր էղավ աղվես, դարվեշ դառցավ թազի ու հ՝ընկավ աղվեսի հ՝ետևեն։

Դեհ հ՝ոդա, դեհ հ՝ոնա, Իստանպոլ ասեմ, թագավորի նստած քաղաք, էկավ հ՝ելավ դուրս։ Թազին լե հ՝ետևեն։

Էկավ, հ՝ելավ գնաց թագավորի քոշք ու սարեն, դարվեշ էլ չհասավ ուրեն։

Օր հ՝ելավ քոշք ու սարեն, էղավ ծաղիկըմ, գնաց նստավ վըր թագավորի թաճեն։

Հոտըմ տվեց էդ քոշք ու սարի մեջ, օր հըմալ հոտ իսկի չըր էղի։ Էդեմական դրախտի հոտ մաներ, որն օր առավ զէդ ծաղկի հոտ, փառավորվավ։

Ասին. «Ջանըմ, էդ հոտ հ՝ուստեն է կիգա, հար հ՝էսօր էդ հոտ չկեր»։

Մաճլիսներուց մեկն իշքեց, տեսավ օր թագավորի թաճի վրեն ծալիկըմ կա, մարդ ուտե, չուտե, հըմա թամաշա էնե։

Ասին.— Թագավոր ապրած, քու թաճի վրավու ծաղկից է կիգա, էդ ծաղիկ թաժա է էղի վըր քու թաճին, հար հ'էսօր էդ ծաղիկ չկեր։

Դարվեշ տեսավ օր չհասավ աղվեսին, էղավ մարդու խըլըղ, մտավ ներս, թամանդար էղավ, կանավ։

Ասին.— Դարվեշ, արի նստի։

Դարվեշն ասեց.— Ջըմ նստի, կէրթամ, ես էկեր իմ կխնդրիմ օր էդա քու վրավու ծաղիկն իտաս ընծի, էրթամ։

Թագավորն ասեց.— Դարվեշ, ի՞նչ է կասիս, անճախ օր զէդ ծաղիկ ըներեր իմ իմ ձեռք, հ'որի՞ կիտամ քզի, էդ ծաղիկ իմ քոշք ու սարին լայեղ է։

Շատ էրես դրեց, մաճլիսներ ասին.— Թագավոր ապրած, դու՝ զծաղիկ ի՞նչ կէնիս, հար հ'իրկուն մնաց, կթոռմի, տուր դարվեշին, թըղ առնե էրթա։

Թագավորի ճար կտրավ, զձեռք թալեց օր փըրցու, իտա դարվեշին, հ'ելնի էրթա, տեսավ օր էդ ծաղիկ էղավ քասե մը կորեկ, թափավ մըշ դիվնին։ Օր ծաղիկ էղավ քասե մը կորեկ, թափավ մըշ դիվնին, դարվեշ էղավ ճետըմ ու սաղեց զէդ կորեկ կցկցել, հ'նտրել։

Դարվեշն է, օր զկորեկներ կհ'նտրեր, կորեկըմ կփրթնի, կընկնի թագավորի օտաց տակ։

Ճետ կիգա, զվիզ կէրկնցու օր զէդ կորեկ վերցու։

Թագավոր կասե.— Էդի ի՞նչ է. ի՞նչ կասե։

Մաճլիսներ կասեն.— Կորեկըմ մանցեր է քու օտաց տակ, էկեր է, կուզե օր զէնի վերցու։

Թագավոր զօտք կվերցու վի, օր ճետ զէն լե առնե։

Կորեկ կէղնի խորոտիկ շըհելըմ ու կհասնի վըր ճետուն, ձեռք կթալե վիզ կբռնե, կտրե զգլոսխ, կթալե մեկ դին, զշանդակ մեկ դին։ Օր կկտրե զշանդակ, թալե մեկ դին, զգլուխ՝ մեկ դին, ճետու շանդակ կդառնա մարդու շանդակ, մեկ լե կդառնա, կէղնի հ'ավալու դարվեշ ու ըսքրի պես կերկնա մըշ դիվնին։

Թագավոր զէդ օր կտեսնա, կհարցու, կասե.—Տղա՛, էդ ի՞նչ է։

Իմալ օր մենք գլխեն թարիֆ էրինք, տղեն հըմալ մեկիկ-մեկիկ զուր գլխու գալած կպատմե թագավորին։

Սորա դառցավ թագավորին, ասեց.— Թագավոր ապրած, քու էրկրի մեջ ինչ խըդար օր շահել կորեր է, էդ դարվեշն է տարի կերի, չես ավտընա, քելե էրթանք, ցուցում։ Մենակ քենե բանըմ կխնդրեմ, զիմ խոսք չկոտրիս, էդ դարվեշին անթիվ մալ կա ու կնիկըմ, օսկիք հ'ըմեն քզի, էն ախչիկ մենակ ընծի։

Թագավոր հ'ելավ, ուր մաճլիսներով, ասքըրներով էկավ մտավ դարվեշի տուն։ Էն վախտ օր դարվեշի գլուխ տղեն կտրեր էր, հ'ախբուր լե

ցամքեր էր, հ՝ախբրի տեխ բացվեր էր դուռ մը։ Կմտնեն ներս, կտեսնան օր տղեն ինչ օր տսեր է, օղորդ է, տղեն զրմեն տեխն ու տեխ կցուցու, թագավոր կվերցու, կառնե կիգա։

Կբերե զախչիկ պսակե վրը տղեն ու զօսկիք լե կվերցու ուրեն։

Աստծուց հ՝իշավ իրեք խնձոր։ Մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե անկաճ էնողին։